

դրեց, և դարձեալ նորա խնդրանօք կատարուեց մի հրէշաւոր և անմիտ ոճիր — Յովհաննէսը գլխատուեց: Աշակերտները եկան և նորա մարմինը թաղեցին:

Թարգմ. Ա. վ.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Սեպտեմբերի 24-ին կատարուեց ձեմարանի 30 ամեայ տարեդարձը բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ, որոնք Ս. Էջմիածնայ տօնի պատճառով հաւաքուել էին Կովկասի զանազան տեղերից:

Հանդիսաւոր պատարագից յետոյ, որի ժամանակ երգում էր Կոմիտաս վարդապետի քառաձայն խումբը, Մայր Աթոռիս միաբանութիւնը՝ գլուխ ունենալով ծերունազարդ Հայրապետին, ձեմարանի ուսուցչական խմբի, սաների և բազմաթիւ ժողովրդեան հետ միասին շրջապատեց ձեմարանի մեծ հիմնադրի ծաղիկների մէջ թաղուած դամբարանը և հոգեհանգիստ կատարեց: Այնուհետեւ բազմութիւնն ուղևորուեց ձեմարան, որի արևելեան ճակատը զարդարուած էր դրօշակներով և կանաչներով, և հէնց բացօթեայ պատրաստուած էր ամբիօն. դրած էին բազկաթոռներ Վեհ. Հայրապետի և միաբանութեան, իսկ աթոռներ և նստարաններ հանդիսականների համար: Հանդէսը բացուեց պատշաճ շարականով, որը նուազարանների ձայնակցութեամբ ներդաշնակ երգեցին աշակերտները:

Այնուհետև ձեմարանի տեսուչ պ. Կ. Կոստանեանը կարդաց տարեկան տեղեկագիրը, դրուատեց ուսուցիչների և մանաւանդ Տ. Կոմիտաս վարդապետի գործունէութիւնը՝ որպէս երաժշտութեան և երգեցողութեան ուսուցիչ և երախտագիտութեամբ յիշատակեց Վեհափառ

Հայրապետի և միաբանութեան խնամքն ու հոգսը դէպի ձեմարանը և նրա յարատեւ պահպանութիւնը: Այնուհետեւ ճառ կարգաց լսարանցիներէց մինը, երգեց և նուագեց հայր Կոմիտասի երգեցիկ խումբը գեղեցիկ ներդաշնակութեամբ, որից յետոյ միաբանութեանս աւագագոյն անգամ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը, բացատրելով հիմնադրի նպատակը և մատնացոյց լինելով ժողովրդին իւր պարտուց վրայ դէպի այդ պատկառելի հիմնարկութիւնը, օրհնեց բոլոր աշխատաւորներին և փակեց հանդէսը սովորական պահպանիչով:

Հետեւեալ օրը ազգիս Ծերունազարդ Հայրապետի ս. Օծման 11-դ տարեդարձն էր: Վեհափառը շաբաթ երեկոյեան հանդիսաւոր կերպով իջաւ Մայր տաճարը, ազօթեց իջման սեղանի առաջ և սկսուեց երեկոյեան ժամերգութիւնը, որից յետոյ նոյնպիսի հանդիսով վերադարձաւ Վեհարան: Հաւաքուած բազմութիւնը տեսնելով ձերունի Հայրապետին չը կարողացաւ զսպել իւր զգացմունքները և օգը թնգաց սրտադին կեցցեններով:

Ձեմարանում և Ս. Էջմիածնայ բակում այս տարի սովորական լուսաւորութիւնը չկար:

Հետեւեալ օրը պատարագից առաջ նոյն հանդիսով Վեհափառը եկեղեցի իջաւ, ներկայ դաժնուեց հանդիսաւոր պատարագին և հայրապետական մաղթանքին, որից յետոյ ամբողջ միաբանութիւնը, ձեմարանի ուսուցչական խումբն ու սաները համբուրեցին նորին Ս. Օծութեան աջը և արեւշատութիւն մաղթեցին: Էջմիածնայ աշնանային եղանակը, պայծառ արևն ու ջինջ կապուտակ երկինքը, խորհրդաւոր օրերը, հանդիսաւոր պատարագն ու ներդաշնակ քառաձայն երգեցողութիւնը, ժողովրդի տօնական տրամագրութիւնն ու բազմութիւնը արտակարգ կեանք էր մտցրել ամեն տեղ: Այդ օրը ճաշին ներկայ էին հինգհարիւրից աւելի անձինք՝ բացի բազմաթիւ չքաւորներից, որոնք մշտական կերակուր են ստանում և տանում տուն: Վեհափառ Հայրապետը սեղանատուն իջնել չկարողանալով՝ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին էր յանձնել սեղանին նախա-

դահելու պատիւը՝ ձաշին խօսուեցին բաժակաճառեր, տեղի ունեցաւ ներդաշնակ երգեցողութիւն եկեղեցական — ազգային երգերի և ներկայ եղող ահագին բազմութիւնը գոհ և ուրախ ցրուեցաւ՝ քաղցր տպաւորութեան ներքոյ։ Երեկոյեան ժամերգութիւնն ու թափօրը կատարուեց բացօթեայ դրա համար յատկապէս շինած տեղում, որին ներկայ եղաւ նորին Վեհափառութիւնը և անձամբ օրհնեց ժողովրդին։ Այդ օրը բազմաթիւ պաշտօնական անձինք, հիմնարկութիւններ, մասնաւոր մարդիք, ուսանողներ, քաղաքներ և գիւղեր առանձին հեռագիրներով շտապել էին շնորհաւորել Մերունազարդ Հայրապետին Ս. Օծման 11-դ տարեդարձը և յայտնել իրենց որդիական անձնուիրութեան և սիրոյ զգացմունքները։

Հոկտեմբերին 2-ին Մայր Աթոռից Թիֆլիզ մեկնեց Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սաթուռեանը, որին Վեհափառ Հայրապետի հրամանով ուղեկցում էին Կորիւն և Մատթէոս վարդապետները։ Մինչև կայարան ուղեկցեցին միաբաններից մի քանի հոգի։ Էջմիածնայ կայարան էր ուղարկուած Թիֆլիզից յատուկ սալօն—վագոն, որով նորին Սրբազնութիւնը մեկնեց իւր պաշտօնատեղին գիշերուայ գնացքով։

Նորին Ս. Օծուքիւն Ազգիս Վեհափառ Հայրապետը օրհնում եւ շնորհակալութիւն է յայնում է այն բոլոր հոգեւորական եւ աշխարհական անձանց եւ հիմնարկութեանց ծառայողներին, որոնք շտապել էին շնորհաւորել նորին Սրբութեան Օծման 11-դ տարեդարձը եւ յայնել իրենց որդիական սիրոյ եւ անձնուիրութեան զգացմունքները։

Մեր միաբաններից շնորհ. Սմբատ սարկաւազը, որ ուսանում էր Պետերբուրգի համալսարանի արևելեան լե-

դուայ քաժնում, սոյն մայիսին աւարտեց իւր դասընթացը ու պետական քննութիւն տալուց յետոյ արժանացաւ առաջին կարգի դիպլոմի:

Շնորհ. սարկաւազը իւր ուսանողութեան ընթացքում Պետերբուրգի համալսարանի յանձնարարութեամբ կազմել է Նոր-Ջուղայի հայոց ձեռագիրների ցուցակը, որոնց թիւը հասնում է մօտ 600 ի. իսկ այս ամառ կազմել է Նախա-վկայի գրչագիրների ցուցակը: Բացի սորանից Պետերբուրգի Աղէքսանդր երրորդի թանգարանի յանձնարարութեամբ կազմել է Նոր-Ջուղայի հայոց և Իսպահանի պարսիկներու ազգագրական ժողովածուն ու Գանձակի նահանգի ազգագրութիւնը, որը դեռ չարունակում է: Անցեալ տարի ստուգել և ժողովել է Ղազախ գաւառի հին արձանագրութիւնները:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Փունջի սեպտ. 18-ի համարում կարդում ենք.

Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ամեն. Տ. Սահակ Ս. Հայրն՝ երեքշաբթի առաւօտ ժամը մէկին ատենները մայրաքաղաքս հասաւ աւստրիական Լոյս ընկերութեան Մարիա Թէրէզա շոգենաւով, որ առաջին կայմին վրայ Օսմանեան դրօշը պարզած էր ի պատիւ: Ղալաթիոյ քարափին վրայ պատրաստ էին պատրիարքական ժողանորդ Սրբազանը, Կրօնական ու Քաղաքական ժողովոյ ատենապետք, անդամք: Երուսաղիմայ պատրիարքական Փոխանորդ Սրբազանը՝ Տ Նդնիկ և Խաղայեան Տ. Ներսէս վարդապետաց հետ, դիւանապետ էֆէնտիններն, զորժակատար Արև էֆէնտի, և այլ ծանօթ ազգայինք եկեղեցական ու աշխարհական դասերէ: Բովանդակ քարափը լցուած էր ազգայնոց և օտարազգեաց ըազմութեամբ: Պատուիրակաց ոմանք իսկոյն շոգենաւը ժողովացին Գարամանեան Յարութիւն էֆէնտինի կողմանէ զրկուած շոգեմակոյնով, բարի դալուստ մաղթեցին Տ. Սահակ